# ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

**27.06.2016թ. | ժամը 18:10-19:00 | ՀՀ կառավարություն**

**Մասնակիցներ՝** **Բազմաշահառու խմբի անդամներ**

| | | |
|---|---|---|
| **Նախագահող՝** | Դ.Հարությունյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար |
| | Կ. Իսախանյան | - ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ |
| | Խ. Հակոբյան | - ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ |
| | Վ. Վարդանյան | - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության պետ |
| | Պ. Խաչատրյան | - «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության իրավական աջակցության ծառայության պետ |
| | Վ. Վարդանյան | - «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» փակ բաժնետիրական ընկերության վարչական ծառայությունների գծով տնօրեն |
| | Ա. Ստեփանյան | - «Գեոթիմ» փակ բաժնետիրական ընկերության կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ |
| | Ա. Նիկողոսյան | - «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի խորհրդական |
| | Ս. Այվազյան | - «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության փոխտնօրեն |
| | Ա. Գրիգորյան | - «Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ |
| | Ի. Զարաֆյան | - «Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ |
| | Հ. Մովսիսյան | - Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ |

**ՀՀ կառավարության աշխատակազմ**

| | |
|---|---|
| Ա.Ասատրյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար |

| | |
|---|---|
| Լ.Թովմասյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ |
| Լ.Շուշանյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդատու |

**Բացականեր՝**

| | |
|---|---|
| Հ. Հովհաննիսյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Ա. Գևորգյան | - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Ա. Ղազարյան | - «Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում» հասարակական կազմակերպության նախագահ |

**Արձանագրող՝** Լ.Թովմասյան

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

### 1. ՀՀ ԱՃԹՆ Բազմաշահառու խմբի (ԲՇԽ) ստեղծման և դրա կազմը հաստատելու որոշման նախագծի քննարկում

**Դ.Հարությունյանը** ողջունեց խմբի մասնակիցներին և ներկայացրեց ԱՃԹՆ ԲՇԽ-ի ստեղծման և դրա կազմը հաստատելու որոշումների կայացման միջազգային փորձի վերաբերյալ տեղեկատվությունը:

**Առաջարկվեց՝** հրապարակել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամների կազմը և այն հրապարակելուց երկու շաբաթ հետո ընդունել ՀՀ վարչապետի «Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության Բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» որոշումը:

### 2. ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ փորձագետի ներկայացում և երկրորդ փորձագետի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարության հրապարակում

**Դ.Հարությունյանը** նիստի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ փորձագետ **Լ.Թովմասյանին** և, կարևորություն տալով երկրորդ փորձագետի ԱՃԹՆ գործընթացում ներգրավման անհրաժեշտությունը, **հանձնարարեց** հրապարակել փորձագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու հայտարարությունը:

## 3. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքների իրականացման ժամանակացույցի ներկայացում

- **ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի նախագծի մշակում**

**Դ.Հարությունյանը** նիստի մասնակիցներին ներկայացրեց ԲՇԽ-ի աշխատակարգի հիմնական դրույթները և առաջարկեց այն շրջանառել ԲՇԽ-ի անդամների միջև, որպեսզի նրանք ներկայացնեն աշխատակարգի կարգավորումների վերաբերյալ իրենց նկատառումները՝ դրանք քննարկելու և աշխատակարգի նախագծում ընդգրկելու նպատակով:

**Առաջարկվեց՝** էլեկտրոնային փոստով աշխատելու նպատակով ստեղծել էլեկտրոնային հասցեների միասնական ցանկ, որի միջոցով կկազմակերպվեն աշխատանքները:

**Հանձնարարվեց՝** Լ.Թովմասյանին, համատեղ աշխատելով ԲՇԽ-ի անդամների հետ, մինչև 2016թ. օգոստոսի 15-ը մշակել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի նախագիծ և շրջանառել այն ԲՇԽ-ի անդամների միջև:

- **ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի հաջորդ նիստի անցկացման ժամկետները**

**Դ.Հարությունյանը** նիստի մասնակիցներին առաջարկեց ԲՇԽ-ի հաջորդ նիստը անցկացնել 2016թ. սեպտեմբեր ամսվա սկզբին՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգը հաստատելու և աշխատանքային ծրագրի նախագիծը/դրույթները քննարկելու նպատակով:

**Առաջարկվեց՝** ԲՇԽ-ի անդամներին և փորձագետին՝ աշխատանքային ծրագիրը մշակելիս աշխատել էլեկտրոնային կապի միջոցներով և աշխատանքային ծրագիրը ներկայացնել ԲՇԽ-ի հաստատմանը 2016թ. հոկտեմբերին:

## ՔՆՆԱՐԿՎԱԾ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

1. **Ա.Գիրգորյանը** հայտարարեց, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ուսումնասիրել են աշխատանքային ծրագրերի միջազգային փորձը, մասնավորապես՝ Ուկրաինայի աշխատանքային ծրագիրը և առաջարկեց ներկայացնել իրենց կողմից մշակված փաստաթուղթը:

2. **Ա.Նիկողոսյանը** հետաքրքրվեց ՀՀ ԱՃԹՆ դիմումը նոյեմբերին ներկայացնելու հնարավորության մասին:

   **Ա.Ասատրյանը** պարզաբանեց, որ, քանի որ ԱՃԹՆ միջազգային խորհրդի հերթական նիստը տեղի է ունենալու 2016թ. հոկտեմբերին, և դիմումը նիստին քննարկելու համար այն ԱՃԹՆ քարտուղարությանը պետք է ներկայացնել նիստից առնվազն երկու ամիս առաջ, իրատեսական է, որ

ՀՀ ԱՃԹՆ դիմումը կներկայացվի 2016թ. դեկտեմբերին՝ այն ԱՃԹՆ միջազգային խորհրդի 2017թ. առաջիկա նիստին քննարկելու համար:

**Դ.Հարությունյանը** հայտատարեց, որ կարևորում է իրականացվող աշխատանքների որակը, որն ապահովելու համար որոշակի ժամանակ է հարկավոր:

---

3. **Ա.Ասատրյանը** ներկայացրեց ՀՀ ԱՃԹՆ գործընթացի մեկնարկի միջոցառման (launch event) իրականացման նպատակահարմարության հարցը:

   **Դ.Հարությունյանը** կարծիք հայտնեց, որ գտնում է, որ ՀՀ ԱՃԹՆ գործընթացի մեկնարկի միջոցառումը նպատակահարմար է իրականացնել ոչ ֆորմալ ձևաչափով և **առաջարկեց** մասնակիցներին՝ ներկայացնել առաջարկություններ գործընթացին համահունչ և հետաքրքիր միջոցառման անցկացման վերաբերյալ:

---

4. Քննարկվեց նաև ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերին միջազգային գործընկերների և այլ մասնակիցների մասնակցության հարցը և որոշվեց ԲՇԽ-ի նիստերին բազմաքանակ դիտորդների և հրավիրյալների մասնակցությունը ԲՇԽ-ի աշխատանքների արդյունավետության տեսանկյունից ոչ նպատակահարմար:

---

5. **Հ.Մովսիսյանը** բարձրացրեց ԲՇԽ-ի անդամներին ՀՀ կառավարության շենք մուտք գործելու համար անցագրեր տրամադրելու հարցը:

   **Դ.Հարությունյանը հանձնարարեց** ուսումնասիրել խնդրի լուծման հնարավորությունը: